Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ԿԱՎԻՑ ՊԱՅՏԱՁԵՎ ԻՐԵՐ ԱՆԻԻ ԱՐՎԱՐՁԱՆԻՑ

Շիրակի մարզի Հայկաձոր գյուղի վարչական տարածքում՝ Ախուրյան գետի ափամերձ հրվանդանի դեպի գետն իջնող դարավանդի միջին հատվածում՝ տուֆի շերտի մեջ, Անի մայրաքաղաքի հյուսիսային արվարձանն է՝ իրար հետ հաղորդակցվող, ձեռակերտ բազմաթիվ քարանձավներով: Ինչպես ցույց են տալիս պեղումները, բնակավայրը կառուցապատվել է ժամանակի տնտեսական կյանքին և կենցաղին համապատասխան և բաղկացած է մեկ կամ երկհարկանի առանձին համալիրներից: Յուրաքանչյուր համալիրի մեջ կան տուֆի շերտի մեջ իջեցված տարբեր մեծության մեկ կամ մի քանի թոնիրներ: Այդպիսի երկու թոնիրների մեջ հայտնաբերվեց մեկական կավե իր, իսկ երրորդը՝ քարանձավի մեջ: Առաջին իրը գտնվեց թիվ 1 քարանձավի առաջին հարկում բացված թոնրի մեջ՝ ակին կիպ դրված դիրքով: Իրը պայտաձև է (երկ. 20սմ, թևերի բացվածքը՝ 20սմ, բարձր.՝ 5սմ, թևերի բարձր.՝ 5սմ, հաստ.՝ 4սմ: Մի թևը, քիչ բարակ է և ծայրը սրացող, մյուս թևը՝ կլորացող (տախտակ I, նկ. 1): Աղեղի ամենաբարձր մասից դեպի ներս կլորավուն ելուստ ունի (լայն. հիմքի մոտ՝ 11սմ, գագաթին՝ 6սմ): Թևերն անհամաչափ են: Իրի մակերեսը զարդարված է 1-1,5սմ տրամագծով և 7մմ խորությամբ, անկանոն տեղաբաշխված փոսիկներով: Իրի մի կողմում կրակի հետքեր են: Երկրորդը, որ գտնվեց թիվ 1 քարանձավում, նույնպես պայտաձև է: Սա ավելի փոքր է (թևերի երկ.՝ 11սմ, լայն.՝ 12,5սմ), կտրվածքում շրջանաձև է, ծայրերը կլորավուն են (տրամ. 3,5-4սմ), մակերեսը՝ անհարթ: Կլորավուն ծայրերին կրակի փոքր հետքեր են, ինչը կրակի վրա ուղղահայաց դրված լինելու արդյունք է (տախտակ I, նկ. 2):

Հայկաձորում թոնիրներ բացվեցին նաև քարանձավների դիմացի հարթակներում՝ բնակավայրի գոյատևման ընթացքում այստեղ կուտակված մշակութային շերտի մեջ: Նման մի թոնիր պեղվեց թիվ 4 քարանձավի մուտքի մոտ: Այս թոնիրը փոքր է (բարձր. 31սմ, բերանի տրամ. 33սմ, հիմքի տրամ. 36սմ): Ի տարբերություն մյուս թոնիրների՝ սա ունի իրարից 90 աստիճան հեռու, փոքր բացվածքով երկու ակ (հիմքը 7սմ, բարձր. 4սմ): Թոնիրի շուրջը տափակ է, խորակոս սեղմված փոսիկներով բաժանված չորս դաշտի, որն, ըստ ամենայնի, արվել է վրան խաչերկաթ դնելու համար: Ի տարբերություն մյուս թոնիրների՝ այս վերջինը շատ փոքր է: Շնորհիվ երկու ակի՝ կրակն ավելի է բորբոքվել և եփման պրոցեսը՝ արագացվել: Նշված թոնրի մեջ գտնվեց պայտաձև երրորդ իրը (տախտակ I, նկ. 3), որը կտրվածքում ուղղանկյուն է: Իրի մի կեսն է պահպանվել: Աղեղի բացվածքը և բարձրությունը նույնն են՝ 22սմ: Ի տարբերություն նախորդների՝ սրա թևն (լայն. 7սմ, հաստ. 4սմ) ավարտվում է ուղիղ հատումով: Եզրից մինչև գագաթ աստիճանաբար հաստանում է՝ 4սմ-ից հասնելով 6-6,5սմ: Մակերեսը նախշազարդված է խորը մատնասեղմումով արված մոտ 1սմ խորությամբ, իրար զուգահեռ երեք շարք փոսիկներով: Փոսիկների երկու շարքը տափակ մակերեսին է, երրորդ՝ դրանց զուգահեռ շարքն անցնում է կողի վրայով: Ինչպես և նախորդ երկու իրերը, սրա հակառակ երեսին նույնպես կրակի հետքեր են: Այս գտածոյի բարձրությունը թոնրի կեսից ավելին է: Հստակ է, որ այն չէր կարող վերաբերել տվյալ թոնրին, նույնիսկ եթե նշված իրերը կիրառական նշանակություն են ունեցել:

Այսպիսով, ունենք կավե երեք իրեր, որոնք բոլորն էլ գտնվել են թոնիրների մեջ, պայտաձև են և ունեն կրակի հետքեր: Թոնիրները տարաժամանակյա են, երկուսը վերաբերում են IX-X դարերին, իսկ երրորդը՝ XVI դարին: Առաջին իրը որոշակի տարբերություն ունի մյուս երկուսից, կամարի կենտրոնից ելնող ելուստը և աստիճանաբար բարակող երկու ծայրերը կարող են ընկալվել ինչպես կենդանու գլուխ՝ առաջ պարզած եղջյուրներով, այնպես էլ՝ գլուխը ներքև հակված և ձեռքերը պարզած դիրքով խիստ ոճավորված մարդկային ֆիգուր:[1] Իրերի մասնակի տարբերությունները ոչ թե տարաժամանակյա լինելու արդյունք են, այլ՝ պատրաստողի անհատական ձեռագրի: Ելնելով իրերի որակից՝ կարելի է պնդել, որ վերջիններս պատրաստվել են ոչ թե վարպետ

---

[1] *Հ. Խաչատրյան, Լ. Եգանյան, Անիի նորահայտ արվարձանի 2003թ. պեղումները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. VI, Գյումրի, 2003, էջ 137:*

խեցեգործի, այլ, ինչպես հաճախ էր լինում, տանտիրուհիների ձեռքերով: Բնակավայրի մերձակայքը հարուստ է կավով, իրի ձևը պարզ էր, պատրաստելը՝ դյուրին և առանձին վարպետություն չէր էլ պահանջվում: Թրծումն էլ կարելի էր կատարել հենց թոնրի մեջ: Կարևորը և հիմնականը կամարի կամ պայտի ձևը պահպանելն էր:

Տախտակ I



Նկ. 1



Նկ. 3





Նկ. 2

Ինչպես արդեն նշել ենք, իրերից մեկը գտնվել է ակին կիպ դրված դիրքով: Ակը թոնրի կրակը բորբոքելու համար նախատեսված օդամուղ է, որ ավարտվում էր թոնրից բավական հեռու: Թոնիրը վառելիս ակը բաց է լինում: Այն փակում են, երբ ապահովվում է հաց թխելու համար անհրաժեշտ ջերմաստիճանը: Թոնիրը վառելու համար աքարի երկու կտոր իրար հակված դիրքով դնում են ակի մոտ, որ Շիրակում կոչվում է *շեքել*: Այս ձևն օգտագործվում էր ակի անցքը չփակելու և կրակը բորբոքելու նպատակով օդի բավարար քանակի մուտքն ապահովելու համար: Կարելի էր ենթադրել, որ կամարաձև այս գտածոներն օգտագործել են որպես հենարան՝ աքարը շեքելու համար: Սակայն այս դեպքում նախ հարց է ծագում, թե ինչու են նշված իրերը պահպանվել միայն Հայկաձորում, այն էլ՝ բազմաթիվ թոնիրներից միայն երկուսում: Բացի այդ, եթե նման հենարանի անհրաժեշտություն լիներ, նշված իրերը կպահպանվեին մինչև օրս: Առաջին իրի ակին կպած լինելը ենթադրում էր, թե այն ունեցել է անշարժ դիրք, գուցե նաև եղել է ամրացված: Սակայն կրակի հետքերը, ինչպես վերը նշեցինք, միայն մի կողմում են՝ հակառակ երեսին, այսինքն՝ իրի շփումը կրակի հետ եղել է միայն այդ կողմից և գտնելու պահին ունեցած դիրքն էլ բոլորովին չի նշանակում, թե այն իր մշտական տեղում է: Քանի որ իրերը գտնվել են թոնիրների մեջ, պիտի ենթադրել, որ անմիջական կապ ունեն կրակի հետ: Երկրորդ իրի վրա կրակի փոքրիկ հետքեր կան թևերի ծայրերին. ենթադրվում է, թե այն օգտագործվել է ուղղահայաց դիրքով: Մյուս երկուսի վրա կրակի հետքերը իրերի տակի մասում են, այսինքն՝ օգտագործվել են հորիզոնական դիրքով: Փոքր հետքերից կարելի է ենթադրել, որ կրակի հետ անմիջական շփում չի եղել, և իրերը դրվել են արդեն հանգած կրակի կամ տաք մոխրի վրա:

Հստակ է, որ Հայկաձորի գտածոները կիրառական նշանակություն չունեն: Թեև համաժամանակյա այլ հնագիտական հուշարձաններից, ինչպես նաև ազգագրական նյութերում որևէ զուգահեռ չունենք, սակայն կամարաձև շարժական օջախների

բազում օրինակներ հայտնի են կուրարաքսյան մշակույթի տարբեր հուշարձաններից: Բացառելով գտածոների կիրառական նշանակությունը և նկատի առնելով թոնիրների մեջ հայտնաբերվելը՝ կարծում ենք՝ իրերն ունեցել են ծիսական իմաստ և կապված են կրակի պաշտամունքի հետ: Ըստ այդմ էլ գտածոների պաշտամունքային և ծիսական դերի վերհանման համար անհրաժեշտ է դրանք քննարկել կրակի, վաղբրոնզիդարյան պաշտամունքային շարժական օջախների, «տուրբ օջախների» և թոնրի պաշտամունքի հետ կապված հավատալիքների համատեքստում:

Հայաստանում տարբեր ժամանակներում օգտագործել են կրակարանների տարբեր ձևեր: Ամենապարզունակը և ամենավաղը մի քանի քարերի դեմ դիմաց կամ կլոր շարվածքն է, որի վրա դրվել է ամանը, իսկ տակը՝ վառվել կրակը: Կրակարանի այս ձևը բացօթյա տարածքում շարունակում է կենցաղավարել մինչև օրս: Կրակը պաշտպանելու և չհանգելու նպատակով կիրառվող նախնական և պարզ այս ձևը հավանաբար հիմք է ծառայել ավելի ուշ շրջանի կրակարան-վառարանների մեկ այլ ձևի՝ բուխարիների ստեղծման համար: Վերջիններիս վերին մասում պահպանել են իրար հակված և աստիճանաբար կորացող, այնուհետև միահյուսվող զույգ գծերից կազմված և կենտրոնում դեպի վեր քիչ սրացող ձևը, որը նաև կարելի է դիտել կրակի լեզվակ: Բուխարու վաղ օրինակ կարող է լինել Բենիամինի մ.թ.ա.1-ին դարով թվագրվող բնակավայրից հայտնաբերված իրար հակված երկու տափակ սալերով կրակարանը:[2] Կրակը վառվել է երկու սալերի միջև: Նշված կրակարանի ձևը նույնն է, ինչ թոնիրը վառելու համար աթարների շեքելը: Քննարկվող իրերին համաժամանակյա և վերջնական ավարտուն տեսք ստացած բուխարիներ բացվել են նաև Հայկաձորում:

Հայկաձորի թիվ 3 քարանձավում թոնիրների կողքին կա նաև ուղղահայաց կանգնեցված չորս տափակ սալերով օջախ՝ քարերից մեկի տակի մասում ակի համար արված կիսաշրջանաձև փորվածքով: Քարանձավներում հաճախ թոնրի կողքին կան նաև քարի մեջ փորված շրջանաձև օջախներ՝ ակի համար արված նեղ և երկար փորվածքով: Ինչպես նշել ենք, հայտնաբերվել է նաև թոնրի ձև ունեցող, երկու ակով փոքր կրակարան: Նշված կրակարանների տարբերությունները ոչ միայն տոցիալական են, այլև արդյունք են գործառույթների առանձնացման:[3] Թեև քարանձավային բնակավայրում կողքկողքի կենցաղավարել են տարբեր վառարան-կրակարաններ, սակայն քննարկվող իրերը, ինչպես տեսանք, գտնվել են միայն թոնիրների մեջ կամ վերջիններիս կողքին: Գուցե դրանց ծիսական գործառույթը կապվում է միայն թոնիրների հետ:

Գտածոներն իրենց ձևով մոտ են կուրարաքսյան մշակույթի տարբեր հուշարձաններից բազմաթիվ օրինակներով հայտնի, քարերով շարված կրակարանների վրա կամ դրանց կողքին հայտնաբերված և պայտաձև շարժական օջախները անունը ստացած կավե իրերին, որոնց հենակները կենդանակերպ (խոյագլուխ կամ ցլագլուխ) կամ մարդակերպ են: Ծիսական օջախների նշված ձևերը տարածված են Հայկական լեռնաշխարհի, Փոքր Ասիայի և Սիրիայի վաղբրոնզիդարյան հուշարձաններում:[4]

---

[2] Հ. Խաչատրյան, Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մաս II), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, Գյումրի, 2000, էջ 28:

[3] Միջնադարյան մեծ ընտանիքի համար նույնիսկ եթե ամեն օր էր թոնիրը վառվում, և եթե հաց թխելու համար արդեն բավարար էր պատերի տաքությունը, սնունդ պատրաստելու համար կրակը մինչև ամանի տակը հասցնելու համար վառելիքի ծախսն անհամեմատ ավելի շատ էր:Առավել նպատակային էր թոնիրը թողնել հաց թխելու համար, իսկ կենցաղային այլևայլ նպատակների համար՝ օգտագործել օջախը:

[4] Ս. Առաքելյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967: Է. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, Եր., 1967: Л. Петросян, Раскопки памятников Кети и Воскеаска (III-Iтыс. до н.э.), Ер.,1989; Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ер., 1975; С. Есаян, Культура племен Северо Восточной Армении, Ер., 1976; Ս. Դևեջյան, Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում, Եր., 2001: Р. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, МИА, ном. 100, 1961; Б. Куфтин, Археологические раскопки 1947г. в Цалкинском районе, Тбилиси, 1948; Ա. Գնունի, Շենգավիթյան մշակույթի օջախները և դրանց համալիրները, ՊԲՀ, թիվ 1, 2004:

Վաղբրոնզիդարյան մշակույթում քարերով շարված օջախների կողքին կավից շարժական օջախների առկայությունը ենթադրում է դրանց ֆունկցիաների տարբերություն: Պայտաձև կամ, որ ավելի ճիշտ է, կամարաձև շարժական օջախներն օգտագործվել են միայն ծիսական նպատակներով: Ընդունված է այն տեսակետը, որ շարժական օջախները խորհրդանշել են արական սկիզբ և տղամարդու կողմից տնային օջախի արգասավորում:[5] Ինչպես ցույց է տալիս վաղբրոնզիդարյան տարբեր հուշարձաններից հայտնաբերված նման օջախների բազմաթիվ բեկորների քննությունը, վերջիններս դրվել են հանգած կրակի կամ մոխրի վրա, որի վկայությունը գտածոների վրա կրակի աննշան հետքերն են: Ինչպես վերը նշել ենք, Հայկաձորի գտածոներից երկուսի վրա կրակի հետքերը միայն տակի մասում են, իսկ երրորդի վրա՝ միայն ծայրերին, որը ուղղահայաց դիրքով օգտագործելու հետևանք է: Իսկ կրակի մեջ լինելու դեպքում բնականաբար այրվելու կամ առնվազն մրոտվելու էին նաև գտածոների կողերն ու արտաքին երեսը ևս:

Կարելի է ենթադրել, որ քննության առարկա գտածոները շարժական օջախներ են, որ դրվել են թոնրի հանգած կրակի կամ մոխրի վրա, այնուհետև պահվել թոնրի մեջ՝ ակին կիպ, ուղղահայաց դիրքով: Ի տարբերություն վաղբրոնզիդարյան օրինակների, որոնք գտնվել են մի քանի քարերով շարված կրակարանների վրա, Հայկաձորի գտածոները հայտնաբերվել են թոնիրների մեջ:

Իրերի շարժական օջախ լինելը հաստատելու համար, կարծում ենք, կարևոր է իրերի ձևի համադրումը վաղբրոնզիդարյան մշակույթին բնորոշ, գիտական գրականության մեջ «պաշտամունքային պայտաձև շարժական օջախ» անունով հայտնի իրերի ձևի (նկ. 1) և բովանդակության հետ: Հայկաձորյան գտածոների ձևը կարելի է համարել ինչպես կամար, այնպես էլ եղջյուր կամ լուսնի մահիկ: Ձևի հիմքում կարող էր լինել թե՛ երկնքի ու ծիածանի, թե՛ լուսնի մահիկի և թե՛ խոյի կամ ցուլի եղջյուրների ձևը: Լուսնի մահիկը համարվել է աստեղային նշան և միշտ կապվել է ցլի կամ խոյի եղջյուրների հետ:[6] Խոյի կամ նրա եղջյուրի ոճավորված պատկերները, սկսած ժայռապատկերներից, տիրական են հայ մշակույթում և պահպանվել են նաև միջնադարում:[7] Գտածոների առաջին և երկրորդ իրերի ձևի ժամանակային ամենամոտ զուգահեռը Դվինի նախաուրարտական շերտից հանված կավե մեծ տախտակի ռելիեֆ պատ-

---

[5] *К. Кушнарева, Т. Чубинишвили, Древние культы Южного Кавказа (V-III тыс. до н.э.) Л., 1970г. стр. 165.*

[6] *Նույնը:*

[7] *Մ.թ.ա. III հազարամյակի հուշարձաններում ոչ միայն հայտնաբերվել են հզոր խոյագլուխներով, մարմնով և վերջույթներով ձևավորված պաշտամունքային օջախ-կրակարանների պայտաձև հենակներ, այլ նաև խոյագլուխ շքասեղներ, զարդեր: Նույն ժամանակաշրջանի ծիսական խեցեղենի մեջ ևս բազմաթիվ են ռելիեֆ խոշոր խոյագլուխները: Կավից խոյի գլխի քանդակներ հայտնաբերվել են Շենգավիթում: Է. Խանզադյան, Եր., 1967, աղ. XV: Խարբերդի հովտի Նորշունթեփե բնակավայրում: Hauptmann Harald, 1970, taf. 69:3, Ankara, 1972, աղ. I: Խոյագլուխ կանթերով է զարդարված Քեթիի քրեղան-օրացույցը: Л. Петросян, Раскопки Кети и Воскеаска, Ер., 1989, (տախտ. 33/6): Հ. Խաչատրյան, Հին հայկական օրացույցի մասին, ԳԱՍ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. I, Գյումրի, 1998, էջ 14-16: Վաղ բրոնզի դարաշրջանում լայն տարածում են գտել օջախի պայտաձև խոյագլուխ հենակները: Նման հենակներ հայտնաբերվել են Շենգավիթում, Վանաձորի Քոսի Ճոթեր բնակավայրում, նաև Կառնուտում, Հաճնում, Ամասիայում: Р. Бадалян, ВОН, 1985, ном. 8, стр. 94-97; Օջախի պատվանդանի խոյագլուխներ գտնվել են նաև Մեծ Մեպասարում: Լ. Եզանյան, Մեծ Մեպասարի 2006թ. պեղումները, ԳԱՍ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IX, Գյումրի, 2006, էջ 69, տախ. II, նկ. 5: Խոյի պաշտամունքն իր արտահայտությունն է գտել ինչպես բրոնզի դարաշրջանի մշակույթի զարգացման հաջորդ փուլերում, այնպես էլ անհիշ ժամանակաշրջանում: Արվեստի լավագույն նմուշների շարքը կարելի է դասել Մեծամորի կաթսայի խոյագլուխ կանթը: Է. Խանզադյան, Կ. Սկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Եր., 1973, էջ 128, նկ.126: Խոյ համաստեղությունը խորհրդանշելու համար միջնադարում օգտագործում էին նրա պատկերն ու նշանը: Խոյը ըստ Շիրակացու համարվել է տասներկու կենդանակերպ համաստեղությունների գլուխը, որն արական է և արեգակի բարձրություն ունի: Խոյի համաստեղության մեջ մտնում են յոթ աստղեր: Շիրակացու մատենագրությունը տպագրության պատրաստեց Ա. Աբրահամյանը, Եր., 1944, էջ 327, 330:*

կերներում է:[8] Տախտակի վերին հատվածում պատկերված են աղեղի բացվածքը դեպի վեր ուղղված երեք իրեր, որոնք նույն ձևն ունեն, ինչ Հայկաձորի գտածոները (նկ. 2):

Նկ. 1

Հ. Իսրայելյանը պատկերը դիտարկում է որպես մարդկային կամ, ավելի ճիշտ, մարդակերպ գլուխների երկու շարք և ենթադրում, որ ներկայացնում են երկնային լուսատուների մի համաստեղություն՝ տղամարդու և կանանց դեմքերով:[9] Պատկերման ռելիեֆային ձևում դրանք կարող են ընկալվել նաև մարդկային դեմք, երբ երկու հարթությունները դիտվեն միասին: Եվ եթե հայկաձորյան գտածոները ևս դիտենք նույն ձևով, նույն ընկալումը կունենանք: Իսկ առանձին դիտված, վերջիններս՝ որպես երկրաչափական մարմին, աղեղ են: Անկախ արտահայտչաձևերից՝ Դվինի տախտակի ռելիեֆային պատկերներում և Հայկաձորի գտածոներում խոյի պաշտամունքն արտահայտված է խորհրդանշական իմաստ արտահայտող աղեղի ձևով: Կարծում ենք քննարկվող իրերը պատրաստելիս գլխավորը եղել է պահպանել ձևը՝ կամար, մահիկ կամ եղջյուր, որոնց մեջ էլ ամփոփված է իմաստը: Ձևը ենթադրում է ժառանգական կապ վաղբրոնզիդարյան շարժական օջախների հետ: Ավելացնենք նաև, որ Հայկաձորի պեղումներով հայտնաբերվել է նաև կանացիակերպ, վերադիր պատկերներով մի աղամաև, որը ժամանակակից է թոնիրների մեջ հայտնաբերված իրերին: Աղամանի վրա պատկերված մարդկային ֆիգուրներից յուրաքանչյուրի գլխից վեր արված է ծայրերը քիչ ներս հակված, սեղմված կամարի կամ խոյաեղջյուրի ձև ունեցող վերադիր պատկեր, որ կրկնում է թիվ 2 գտածոյի ձևը (նկ. 3): Նույն հուշարձանում համաժամանակյա երկու գտածոների՝ մի դեպքում իրի ձևի, մյուս դեպքում աղամանի վրա վերադիր պատկերները ենթադրում են բովանդակային ընդհանրություն: Հնագույն հավատալիքների և պաշտամունքի արձագանքները պահպանվել են Երերույքի V դարի տաճարի վրա, որի արևմտյան մուտքի բարավորի կենտրոնում արևի սկավառակն է՝ աջ և ձախ կողմում կանգնած, գլուխները դեպի արևը մեկական խոյով (նկ. 4): Միջնադարյան նշանագրերում պահպանված *աղ* բառի նշանագրի պատկերագրությունը խոյա-

---

[8] *Հ. Իսրայելյան, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Եր., 1973, էջ 38, նկ. 11:*

[9] *Նույնը:*

գլուխ է,[10] և հիշեցնում է վաղբրոնզիդարյան ոճավորված խոյագլուխ կեղծ ունկերը: Արդյոք այն պատահական նմանությո՞ւն է, թե՞ պաշտամունքային կապի դրսևորում: Հայկաձորի գտածոներից երկուսը, ինչպես վերը տեսանք, նաև զարդարված են շրջանաձև կամ օղակաձև փոսիկներով, որոնք կարելի է ընկալել և՛ որպես արև, և՛ լուսին, որոնք պատկերվում էին շրջանի կամ օղակի ձևով և կարող էին նաև խորհրդանշել երկինքն ընդհանրապես՝ ելնելով լեռնային երկրում երկինքը շրջանի ձևով երևալուց:

Միջնադարյան գտածոների ձևի նմանությունը վաղբրոնզիդարյան շարժական պայտաձև օջախների հետ ենթադրում է նաև բովանդակային կապ, մանավանդ երկու դեպքում էլ իրերը գտնվել են կրակի հետ կապվող միջավայրում՝ առաջինները կրակի մոտ կամ կրակի վրա, երկրորդները՝ թոնրի մեջ:

Հնդեվրոպական ժողովուրդների հավատալիքներում առանձին տեղ էր հատկացված կրակի պաշտամունքին և մաքրագործող կրակի ծիսակարգը անհիշելի ժամանակներից գոյություն է ունեցել տարբեր ժողովուրդների մոտ: Կրակի՝ որպես ֆիզիկական երևույթի, լույս, ջերմություն, կյանք ապահովելու, միաժամանակ նաև հրո ճարակ դարձնելու, մոխրացնելու հատկություններն են ընկած դիցաբանական ընկալումներում վերջինիս հատկացված դերում՝ այն կապելով և՛ կյանքի, և՛ մահվան հետ: Ըստ այդմ էլ՝ հնդեվրոպական թաղման ծեսում կրակը կապվում է վերածնության հետ՝ կյանք-մահ-վերածնունդ շրջափուլի մեջ:

Հայ ժողովրդական հավատալիքներում պահպանված են կրակի հետ կապված տարբեր ծեսեր, հավատալիքներ և սովորույթներ: Կրակը կարելի է մարել միայն մոխիրով ծածկելով,իսկ որոշ ժողովուրդների մոտ ոճրագործություն է համարվել կրակը փչելով կամ ջրով հանգցնելը:[11] Նույն այդ հավատալիքի արդյունք է մինչ օրս հայոց մեջ մոմը մատների սեղմումով հանգցնելու սովորույթը: Կրակի հետ պաշտամունքի աստիճանի է բարձրացվել նաև օջախը: Խուռիտական պաշտամունքում օջախները երբեմն նաև աստվածացվել են, և նրանց զոհ էին մատուցում:[12] Զուգահեռաբար սուրբ է համարվել նաև մոխիրը: Տաճարների կամ սրբազան օջախների մոխիրը չէր թափվում, այլ կուտակվում էր հատուկ դրա համար հատկացված տեղում: Քրիստոնեության մուտքով հավատալիքները հարմարեցվեցին նոր գաղափարախոսությանը: Տեառնընդառաջի մոմերը վառում էին եկեղեցու ջահից և երբ քահանայի կողմից օրհնված խարույկն այրվում վերջանում էր, տակավին վառվող սուրբ մոխրից կպցնում էին իրենց մոմերը և վառած տանում էին տուն:[13]Հայերի կողմից մոխրի պաշտամունքի վկայություն է Ագաթանգեղոսի տված բնորոշումը,- «...ի մոխրապաշտութեան նախնեաց մերոց»:[14] Պաշտամունքը ներառել է նաև օջախը լայն իմաստով՝ ընտանիքը: Հայոց ծեսերի նշանա-

---

[10] *Հր. Աճառյան, Հայոց գրերը, Եր., 1984, հավելված «Յուցակ հայկական հին նշանագրերի»:*

[11] *Մ. Արեղյան, հ. Է, Եր., 1975, էջ 58:*

[12] *Հ. Շանշաշվիլի, Происхождение и функции очажных подставок Куро-араксской культуры. Археология, этнологияи фольклористика Кавказа (материалы международной конференции, Эчмиадзин, 2003, стр. 59:*

[13] *Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 63:*

[14] *Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի), Եր., 1983, 89:*

կալի մասը կապված է ընտանեկան օջախի հետ, որտեղ առանձնակի դեր է հատկացված թոնիրին: Թոնիրը տան սրբավայրն էր, եկեղեցուն հավասար է դասվել և երբեմն այդպես էլ կոչվել է: Թոնիրը շինելուց հետո կանչում էին քահանային՝ այն օրհնելու:[15] Հայոց հավատալիքների համաձայն՝ նախնիները բնակվում են թոնրի շրթին և կարող էին նաև երկյուղ ներշնչել:[16] Սովորույթ կար ատամները ու եղունգները թաղել թոնրի շուրթի մոտ կամ նետել ակը՝ աղոթելով այնտեղ բնակվող ոգիներին, այդ արարողությունների կատարման մասին նրանց վկա կանչելով:[17] Այդ նույն ոգիներին արված զոհաբերություն պիտի դիտել Հայկաձորի թիվ 3 քարանձավի թոնրի ակի մեջ 13-րդ դարի արծաթյա դրամի գյուտը:

Ըստ հայոց հավատալիքների՝ կային նաև «սուրբ օջախներ»: Այս տեսակը, ըստ Մ. Աբեղյանի, փոքրիկ բարձրություններով շրջափակված սովորական կրակատեղի է, որտեղ կաթսան եռոտանու վրա է դրվում, իսկ ակը վառվում է կրակը:[18] Ստ. Լիսիցյանի վկայությամբ Ղարաբաղի գրեթե ամեն գյուղում կար կիսավեր «սև տուն»՝ դարդամ, որի միայն պատերն էին պահպանված լինում, կամ էլ բնակելի դարդան, որտեղ գտնվում էր ոչ միայն տվյալ գյուղի, այլ նաև հարևան գյուղերի համար սրբազան օջախ:[19] Օրհնված ու նվիրական օջախներ կային, որոնք սովորաբար իրենց տոհմային նահապետական օջախների կրակը տարին տասներկու ամիս, գիշեր-ցերեկ, սերնդից սերունդ՝ դարեր շարունակ վառ էին պահում:[20] Շատ օջախներ սուրբ էին ամբողջ գյուղի և գավառի համար, ինչպես, օրինակ, գյուղի հիմնադրի, այսինքն՝ նախապապի օջախը:[21] Այստեղից էլ «օջախդ հանգչի» արտահայտությունը տոհմի ընդհատման դատապարտող ծանրագույն անեծք էր, քանզի ամեն տան օջախն ընտանիքի կյանքի կենտրոնն էր:[22] Պատվավոր հյուրն օջախի մոտ էր նստում: Օջախով էին երդվում՝ «էն օջախը վկա», բարի և լավ ավանդույթները պահպանող այս կամ այն ընտանիքի բարոյական կերպը բնորոշվում էր «սա օջախ է», իսկ ամուսնացող աղջկա համար լավագույն բնորոշումը «օջախի աղջիկ» արտահայտությունն էր:[23] Հասարակության մեջ դիրքը, հարգանքն ու բարօրությունը ձեռք էին բերվում օջախում բնակվող բարի ոգու միջոցով: Ինչպես որ հայրական տնից բաժանված որդու տուն կրակ էր տարվում՝ հայրական զորությունից մաս տանելով, այնպես էլ գյուղի օջախի զորությունը կարելի էր տեղափոխել մեկ այլ գյուղ:[24] Օջախն ընտանիքի միաբանության խորհրդանիշն էր, այն կապված է տան կրակի և նախնիների պաշտամունքի հետ, և յուրաքանչյուր ընտանիքի համար իր օջախը սուրբ էր: Պատահական չէ, որ եկեղեցում պսակադրությունն ավարտելուց հետո հարսն ու փեսան իրենց պարտքն էին համարում մի «սուրբ օջախի» հարգանքի տուրք մատուցել: Եթե գյուղում եկեղեցի չկար, զույգը դեմքով դեպի արևելք կանգնում էր օջախի կամ թոնրի մոտ վառվող մոմերի առաջ, ապա ծնկի էր գալիս, համբուրում օջախը և ամուսնական արարողությունը կատարված էր:[25] Օջախի պաշտամունքի վերաբերյալ նույն հավատալիքներն է բերում Ստ. Լիսիցյանը. «Թաքվերն ու թաքուհին չոքում և համբուրում էին տան օջախը, և ապա բոլորն էլ դիմում էին եկեղեցի: Այն դեպքերում, երբ որևէ պատճառով չէին գնում եկեղեցի, կամ գյուղում եկեղեցի չլինելու պատճառով, կամ երբ չհաստությունը արգելք էր հանդիսանում, պսակը

---

[15] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 59:*
[16] *Նույնը:*
[17] *Նույնը:*
[18] *Նույն տեղում, էջ 14:*
[19] *Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.12, Ստ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Եր., 1981, էջ 59:*
[20] *Գ. Հ ա լ ա ջ յ ա ն, Դերսիմի հայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 5, Եր., 1973, էջ 213:*
[21] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 60:*
[22] *Ստ. Լ ի ս ի ց յ ա ն, նշվ. աշխ., 1981, էջ 59:*
[23] *Նույնը:*
[24] *Նույնը:*
[25] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 61:*

կատարվում էր շրթին վառած մոմերով օջախի կամ թորէնի (թոնիրի-Լ.Ե.) մոտ»:[26] Աղջիկը հայրական տնից հեռանալուց առաջ շատ դեպքերում փեսան էլ համբուրում էին օջախի կամ թոնրի շուրթը և նորապսակները ուղևորվում էին փեսայի տուն:[27]

Հայոց մեջ հարսանիքի ժամանակ մինչ հոր տունը թողնելը հարսի կողմից տան «օջախ-թոնիրը» երկրպագելու ծեսի մասին վկայում է նաև Ի. Պետրուշևսկին՝ ավելացնելով գյուղացիների վկայությունը, որ՝ «իրենց համար ոչ թե եկեղեցական պսակի մեջ է կայանում հարսանեկան ծեսի էությունը, այլ հենց թոնիրը երկրպագելու»:[28] Չորս քարերով մի «սուրբ օջախ» պեղվել է Արցախում՝ Քարաբլուրի միջնադարյան մատուռի մեջ:[29] Ըստ ազգագրական նյութերի՝ սուրբ է համարվել նաև բուխարին:[30] Ախուրյանի տարածաշրջանի Կապս գյուղում սրբատեղի է կիսավեր տան մի հատված՝ հյուսիսային պատի մեջ դրված բուխարիով:[31] Վերջինս ցույց է տալիս, որ «սուրբ օջախը», ինչպես արդեն նկարագրել ենք, կարող էր լինել և՛ «փոքրիկ բարձրություններով շրջափակված սովորական կրակատեղին», և՛ թոնիրը, և՛ բուխարին: Իսկ օջախը կարող էր «սուրբ» դառնալ միայն հասարակության կողմից ընդունված բարոյական որոշակի չափանիշների նկատմամբ տվյալ ընտանիքի կամ տոհմի ունեցած վերաբերմունքի, այդ արժեքների պահպանման և վերջիններիս գնահատանքի արդյունքում:

Հայ ժողովուրդը, ապրելով իր բնօրրանում, նաև կերտել է հոգևորը, այնուհետև ժառանգորդմամբ փոխանցել սերունդներին: Հազարամյակների ընթացքում հավատալիքներն ու ծեսերը բնականաբար փոփոխություններ են կրել: Նոր շերտեր են ավելացել, նաև կորսվել, սակայն խորքում անթեղված է հավատալիքի բուն էությունը: Շատ ծեսեր այսօր կարող են ընկալվել միայն որպես հեռավոր անցյալի վերապրուկներ: Սակայն վերապրուկային բնորոշվող յուրաքանչյուր ծեսի խորքում անթեղված է գաղափարը, որին միտված է եղել ծեսի նպատակն ու իմաստը: Հեթանոսականից քրիստոնեական կրոնին անցնելիս հավատալիքները, թեկուզ և վերաիմաստավորված, հաճախ պահպանվել են: Ծեսն այս դեպքում որպես ինչ-որ գաղափարի կրող, գուցեև արդեն կորցրել էր խորհրդանշական իմաստը և պահպանվել էր զուտ որպես սովորույթ: Ասվածի վկայությունն են Հայկաձորի թոնիրների մեջ հայտնաբերված վաղբրոնզիդարյան կամարաձև շարժական օջախների հետևագույն տարբերակները:

Վաղբրոնզիդարյան շարժական օջախները հավանաբար մտահղացվել են որպես կամար, որ կարող էր խորհրդանշել երկնակամարը, իսկ կրակը՝ արևը: Շարժական օջախների միջնադարյան տարբերակներն օգտագործվել են հանգած կրակի կամ մոխիրի վրա դնելու համար: Հայոց միջնադարյան կենցաղում թեև կար և բուխարին, և պահպանվում էր մի քանի քարով շարված օջախը, սակայն թոնիրին է փոխանցվել հավատալիքը գուցե նաև այն պատճառով, որ հացը թխվում էր թոնրի մեջ: Հայոց հարսանեկան ծեսի մեջ նորապսակների ուսերին լավաշ գցելու արարողությունը, կարծում ենք, ոչ միայն ամբողջ կյանքում հաց ունենալու, այլ նաև ընտա-

---

[26] *Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 194:*

[27] *Նույն տեղում, էջ 196:*

[28] *Հ. Պետրոսյան, Քարաբլուրի նորագյուտ սրբարանը և «Սուրբ օջախների» պաշտամունքն Արցախում, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 349-350:*

* *Ի. Պետրուշևսկու վկայությունը Հ. Պետրոսյանը համարում է «կանխակալ-նպատակային...» և արդյունք «ժամանակի հակաքրիստոնեական-աթեիստական հրամայականի»: Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 349-350: Մ. Աբեղյանը ևս պատկաղրության ժամանակ կատարվող արարողությունների շրթայում օջախի պաշտամունքի հետ կապված նույն հավատալիքներն է բերում: Մ. Աբեղյանի աշխատությունը հրատարակված է գիտնականի Երկերի Է հատորում, «Հայ ժողովրդական հավատք» ենթավերնագիրն է կրում և թարգմանված է դեռևս 1899թ. Լայպցիգում հրատարակված «Der armenische Volksglaube» վերնագրով գերմաներեն բնագրից (Մ. Աբեղյան, Երկեր, հ. Է, Եր.,1975, էջ 5):*

[29] *Հ. Պետրոսյան, նշվ. աշխ. էջ 347:*

[30] *Նույն տեղում, էջ 59:*

[31] *Մոմավառությունը կատարվում է բուխարու կրակարանի վրա: Հալված մոմերից կպչուն դարձած բուխարու վերին հատվածում մի քանի մանրաղբամներ են: Ուխտավորները մտքներում պահած նպատակը իրականանալի են համարում, երբ մանրաղբամը կպչում է քարին:*

նեկան օջախի հարատևման հետ է կապվում: Իսկ օջախի պաշտամունքի հիմքում, ինչպես կրակի պաշտամունքն է:

Ախուրյանի ափին արդեն մի քանի հարյուրամյակ երկինք են հառնած Սբ Սինաս, Սբ Գևորգ եկեղեցիները և Հռոմոսի հայակերտ վանքային համալիրը: Իսկ դիմացի ափին՝ քարանձավային բնակավայրում, քրիստոնեական աղոթքը շուրթին՝ հայ մարդը երկրպագում և պահպանում էր նաև հազարամյակների խորքից եկող հավատալիքը:

Հայկաձորի քարանձավային բնակավայրի միջնադարյան շերտում՝ թոնիրների մեջ, հայտնաբերված երեք իրերը, հազարամյակների խորքից եկող պաշտամունքի արձագանքն են, որ ծպտումով պահպանվել են նաև միջնադարում: Ծպտում, որի տակ սքողված են կրակի և խոյի պաշտամունքի հետ կապված հավատալիքները:

Հազարամյակների երթում իրի խիստ ոճավորումը միայն բնականոն զարգացման արդյունք չէ: Կրոնի փոփոխությունը բնականաբար բերում է նաև ծեսերի և արարողակարգերի փոփոխություն: Երբ առասպելաբանական որևէ պատումն անցնում է մի կրոնից մյուսին, սկսվում է նրա տրոհումն ու մասնակի քայքայումը: Սակայն կա մի սահմանային վիճակ, երբ տրոհվելով և դիմագիծը կորցնելով, իսկ առասպելաբանության առանձին հատվածներ, նոր գաղափարախոսություն ներառվելով և փոխակերպվելով, մասնակիորեն դառնում են առավել հստակ: Այսպես եղավ նաև քրիստոնեությունն ընդունելիս: Նոր կրոնը ներառեց հայոց հնագույն հավատալիքներն ու հին կրոնի հերոսներին փոխարինեց նորերով: Ժխտվեց հին հավատքը, հեթանոսական աստվածները հռչակվեցին չաստվածներ, սակայն չկարողանալով հիմնովին արմատախիլ անել այն հավատալիքներն ու ծեսերը, որ ժողովուրդը պահպանում էր, եկեղեցին այլակերպեց նաև հավատալիքների բովանդակությունը: Այս դեպքում քրիստոնեական բնույթ տրվեց խոյի զոհաբերությանը՝ այն պահպանելով որպես մատաղ:

Այսպիսով, հայկաձորյան գտածոների նախօրինակները վաղբրոնզիդարյան մշակույթում են: Ասվածը հաստատվում է ոչ միայն ձևառնական ընդհանրություններով, այլ նաև կիրառությամբ: Կուրարաքսյան մշակույթում ստեղծված պայտաձև շարժական օջախներն իրենց ձևն ու ծիսական գործառույթը պահպանել են նաև միջնադարյան Հայկաձորում: Կրակարան-վառարանի ձևափոխության ժամանակ պայտաձև իրերի գործառույթը տեղափոխվել է թոնրի մոխրի վրա: Հնագիտական նյութի քննությունը ցույց է տալիս, որ կամարաձև շարժական օջախները Հայկաձորում պահպանվել են մինչ 16-րդ դար, այնուհետև վերջնականապես դուրս են մղվել՝ որպես հավատալիքի և պաշտամունքի ժառանգորդման ու պահպանման վկայություն՝ թոնրին փոխանցելով տան սրբավայրի դերը:

ПОДКОВООБРАЗНЫЕ ГЛИНЯНЫЕ ПРЕДМЕТЫ ИЗ ПРИГОРОДА АНИ

___ *Резюме* ___ ___ *Л. Еганян* ___

При раскопках пригорода Ани пещерного поселения Айкадзор в тонирах, датируемых 13 и 16 вв., найдены три глиняных предмета, которые по форме напоминают раннебронзовые передвижные очаги. Предметы имеют форму арки, но разные по исполнению. Два из них украшены солярными знаками в виде маленьких кружочек. На всех трех предметах следы частичного ожога.

На основе археологического материала, письменных свидетельств и анализа этнографических материалов выявляется ритуальная роль этих предметов: очажные подставки, восходящие к раннебронзовым передвижным ритуальным очагам, служили для почитания огня и домашнего очага вплоть до 16-ого века. С 16-ого века ритуал почитания домашнего очага и огня перешло тониру.